

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**№ 29/08**

**Քաղ. Երևան**

**04 նոյեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Յ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. նոյեմբերի 04-ի նիստում (արձանագրություն №65/3) քննարկեց Վոլթոն Ինտերնեյշնլ Լիմիթիդ (KY) ընկերության ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար, Արարատ Գալոյանի 2008թ. սեպտեմբերի 23-ի բողոքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն)՝ «GIORDANO» (հայտի No. 20061008) բառային ապրանքային նշանի գրանցումը մասնակի մերժման կրկնական փարձաքննության 23.06.2008թ որոշման դեմ:

2008թ. հունիսի 23-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15-րդ կետի 2-րդ ենթակետի և 93-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանը գրանցվել է միայն 35-րդ դասի հայտում նշված ապրանքների և ծառայությունների նկատմամբ, մերժվել է գրանցումը 18-րդ և 25-րդ դասերի հայտում նշված ապրանքների և ծառայությունների նկատմամբ՝ նույնատիպ ապրանքների համար ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան ավելի վաղ գրանցման գործողություն ունեցող «GIORDANO EMPORIO S.R.L.» ընկերությանը պատկանող շփոթելու աստիճանի նման «GIORDANO DORIA» միջազգային գրանցման թիվ 690532 և «GIORDANO EMPORIO» միջազգային գրանցման թիվ 690533 ապրանքային նշանների առկայության պատճառով:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են՝

Բողոքարկողը նշել է, որ որոշումը կայացվել է օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետի և 93-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույնատիպ ապրանքների համար ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան ավելի վաղ գրանցման գործողություն ունեցող «GIORDANO EMPORIO» ընկերությանը պատկանող շփոթելու աստիճանի նման «GIORDANO DORIA» միջազգային գրանցման թիվ 690532 և «GIORDANO EMPORIO» միջազգային գրանցման թիվ 690533 ապրանքային նշանների առկայության պատճառով: Բողոքարկողը նշել է նաև, որ վերոնշյալ միջազգային գրանցումների գործողության ժամկետը լրացել է 2008թ ապրիլի 2-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը բողոքարկողը խնդրել է վերանայել «GIORDANO» (հայտի No. 20061008) բառային ապրանքային նշանի վերաբերյալ կայացրած մասնակի մերժման որոշումը և

գրանցել վերոնշյալ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ նաև 18-րդ և 25-րդ դասերի ապրանքների համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը համաձայնվեց բողոքարկողի այն փաստարկի հետ, որ «GIORDANO DORIA» միջազգային գրանցման թիվ 690532 և «GIORDANO EMPORIO» միջազգային գրանցման թիվ 690533 ապրանքային նշանների գրանցման գործողությունը 02.04.2008թ-ից դադարել է, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տարածքում, որը հիմնավորվում է «ROMARIN» ապրանքային նշանների միջազգային գրանցման հիմնապաշարի տվյալներով: Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ «GIORDANO» (հայտի No. 20061008) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու հիմքերը վերացել են բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «GIORDANO» (հայտի No. 20061008) բառային ապրանքային նշանը ենթակա է գրանցման հայտարկված 18-րդ և 25-րդ դասերի ապրանքների նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

#### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Բավարարել «Վոլթոն Ինտերնեյշնլ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ՝ Արարատ Գալոյանի 2008թ. սեպտեմբերի 23-ի բողոքը և կրկնական փորձաքննության 2008թ. հունիսի 23-ի որոշումը «GIORDANO» (հայտի No. 20061008) բառային ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին չեղյալ ճանաչել և «GIORDANO» (հայտի No. 20061008) բառային ապրանքային նշանը գրանցել խնդրարկվող 35-րդ, 18-րդ և 25-րդ դասերի խնդրարկվող ապրանքների և ծառայությունների համար:

Բողոքարկման խորհրդի  
Նախագահ

Ա.Ազիզյան